

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՋԻՄԻԱ

Հ. Հ. Ղազոյան. Դիմեթիլսուլֆոնի ծավալային հատկություններն էթանոլ-ջուր խառնուրդներում էջ. 3–8

Չափվել են դիմեթիլսուլֆոնի (ԴՄՍՕ₂) լուծույթների խտությունները տարբեր բաղադրությամբ էթանոլ-ջուր խառնուրդներում մինչև 1 մոլ կգ⁻¹ կոնցենտրացիայի տիրույթում: Լուծույթների խտությունները և թվացող պարզիալ մոլային ծավալները որոշվել են 293.15–323.15 Կ ջերմաստիճանային տիրույթում: Ցույց է տրվել, որ ԴՄՍՕ₂-էթանոլ-ջուր համակարգերում էթանոլի և ջրի միջև ուժեղ միջմոլեկուլային փոխազդեցությունները բերում են ԴՄՍՕ₂-ի պարզիալ մոլային ծավալի մեծացմանը: Հաստատվել է, որ դիտարկվող երևույթները պայմանավորված են միջմոլեկուլային փոխազդեցությունների մրցակցությամբ:

Լ. Ս. Մարգարյան. Մարդու հեմոգլոբինի ծավալային հատկությունների վրա տարբեր գործոնների ազդեցության հետազոտությունը էջ. 9–12

Խտաչափության եղանակով ուսումնասիրվել է տարբեր գործոնների ազդեցությունը (ջերմաստիճան, սպիտակուցի կոնցենտրացիա, խմբային տարանջատում) մարդու հեմոգլոբինի (ՄՀբ) ծավալային հատկությունների վրա: Հետազոտություններն իրականացվել են 301.15, 307.75 և 313.15 Կ ջերմաստիճաններում: Ցույց է տրվել, որ խտությունը, թվացյալ պարզիալ տեսակարար և պարզիալ տեսակարար ծավալների արժեքները ՄՀբ տարանջատված և չտարանջատված խմբերի համար տարբեր են:

Գ. Ա. Շահինյան. AOT-ն-հեպտան-ջուր+դիմեթիլսուլֆոքսիդ կամ դիէթիլսուլֆոքսիդ շրջված միցելային համակարգի էլեկտրահաղորդականությունը 20–50°C ջերմաստիճանային տիրույթում էջ. 13–20

Հետազոտվել է նատրիումի աղի բիս(2-էթիլհեքսիլ)սուլֆատուկցինատ (AOT)-ն-հեպտան-ջուր+դիմեթիլսուլֆոքսիդ (ԴՄՍՕ) կամ դիէթիլսուլֆոքսիդ (ԴԷՍՕ) շրջված միցելային համակարգի էլեկտրահաղորդականության կախվածությունը ջերմաստիճանից բևեռային ֆազի (ջուր, ջուր+ԴՄՍՕ, ջուր+ԴԷՍՕ), մակերևութային ակտիվ նյութի մոլալ կոնցենտրացիաների հաստատուն հարաբերության և ԴՄՍՕ (ԴԷՍՕ)/ջուր ծավալային հարաբերության տարբեր արժեքների պայմաններում: Յուրաքանչյուր համակարգի համար գնահատվել են պերկոլյացիայի սահմանային ջերմաստիճանները (T_p) և քննարկվել են ԴՄՍՕ-ի և ԴԷՍՕ-ի ազդեցությունները պերկոլյացիայի գործընթացի և սահմանային ջերմաստիճանի վրա: Եվ ԴՄՍՕ-ն, և ԴԷՍՕ-ն գործում են որպես պերկոլյացիան թուլացնող հավելանյութեր: Խառը լուծիչի ազդեցությամբ դիտվում է T_p -ի նվազում և համակարգի ձգտում՝ պերկոլյա-

ցիոնից դառնալ ոչ պերկոլյացիոն: Համաձայն Արենիուսի հավասարման՝ էլեկտրահաղորդականության պերկոլյացիայի համար որոշվել է նաև ակտիվացման էներգիան (E_p): Արդյունքները ցույց են տալիս, որ E_p -ն նվազում է ինչպես ԴՄՍՕ-ի կամ ԴԷՄՕ-ի ավելացման՝ այնպես էլ ԴՄՍՕ-ի կոնցենտրացիայի աճի դեպքում:

Լ. Ռ. Հարությունյան, Գ. Պ. Փիրումյան. Բնական ցեոլիտով անիոնային և կատիոնային մակերևութային ակտիվ նյութերից ջրերի մաքրումը էջ. 21–28

Ուսումնասիրվել է անիոնային նատրիումի դոդեցիլսուլֆատի և կատիոնային ցեոլիտրիմեթիլամոնիումի բրոմիդի ադսորբցումը ջրային լուծույթներից ցեոլիտի մակերևութային: Որոշվել են, ադսորբցիայի վրա ազդող, մի շարք պարամետրերի օպտիմալ արժեքներ (հպման ժամանակը, ադսորբենտի քանակը և մակերևութային ակտիվ նյութի (ՄԱՆ) սկզբնական կոնցենտրացիան): Փորձարարական տվյալները մշակվել են համաձայն Լենգմյուրի և Ֆրեյնդլիխի տեսությունների: Ուսումնասիրված ՄԱՆ-ից ցեոլիտի մակերևութային ադսորբվելու առավել մեծ ունակությամբ օժտված է ցեոլիտրիմեթիլամոնիումի բրոմիդը:

Ս. Ս. Հայրապետյան, Լ. Ս. Հայրապետյան, Լ. Գ. Մանգասարյան, Հ. Գ. Խաչատրյան. Կալիումի իոնների սորբումը $\text{SiO}_2\text{-MnO}_2$ համակարգի միջոցով էջ. 29–32

Կոնդուկտոմետրական եղանակով գնահատվել են $\text{SiO}_2\text{-MnO}_2$ բինար համակարգերի սորբումային հատկությունները: Քննարկվել է նշված համակարգերի կլանիչ հատկությունների վրա տարբեր գործոնների (մասնավորապես մանգանի երկօքսիդի և սիլիկատի համատեղ նստեցման ընթացքում pH-ի արժեքների) ազդեցությունը: Ուսումնասիրվել է նաև ջերմային մշակման ազդեցությունն նման համակարգերի սորբումային հատկությունների վրա: Հաստատվել է, որ գոյություն ունի ջերմային մշակման առավել արդյունավետ ջերմաստիճանային տիրույթ, որն ապահովում է առավել բարձր սորբումային տարողությամբ բնութագրվող կլանիչների ստացումը:

Մ. Լ. Երիցյան, Ի. Ն. Սիրեկանյան, Լ. Ն. Երիցյան. Գլիօքսալի ազոտ պարունակող նոր տիպի ածանցյալներ և կոմպլեքսներ դրանց հիման վրա էջ. 33–38

Հետազոտվել է միզանյութի, մոնոմեթիլումիզանյութի և գլիօքսալի միջև ընթացող ռեակցիան: Ստացված արգասիքների փոխազդեցությունը Ni^{2+} և Cu^{2+} ագետատների հետ, բերում է ինչպես միաշափ, այնպես էլ օլիգոշափ խելատային կոմպլեքսների առաջացման: Սինթեզված միացություններն ուսումնասիրվել են ԻԿ, ՊՄՌ սպեկտրադիտման և տարրերի անալիզի եղանակներով:

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծ. Ի. Աղամյան, Հ. Ս. Կարապետյան, Է. Ս. Գևորգյան, Տ. Ա. Հայրապետյան. Իմմոբիլիզացիոն սթրեսի ազդեցությունը լեյկոպոեզի ցուցանիշների եվ պրոլիմի կենսասինթեզի ֆերմենտների ակտիվության փոփոխության վրա էջ. 39–44

Հողվածում հետազոտվել է իմմոբիլիզացիոն սթրեսի ազդեցությունը ճագարների լեյկոպոեզի և պրոլիմի կենսասինթեզի ֆերմենտների ակտիվության

վրա: Սկզբնական փուլում դիտվում է կորիզի ձախ թեքումով նեյտրոֆիլների քանակությունը և լիմֆոցիտների ավելացում, որն ըստ երևույթին պայմանավորված է ոսկրածուծից ծայրամասային արյան դրանց արագ ելքով՝ գրանուլոցիտների ոսկրածուծային ռեզերվի և փայծաղի ու ուրցագեղձի լիմֆոցիտային բջիջների սթրեսորային մոբիլիզացիայով: Իմունոբիլիզացիոն սթրեսի ազդեցության տևողության ավելացմանը զուգընթաց դիտվել է նեյտրոպենիա, էոզինոպենիա և բազոպենիա: Միելոգրամմայում բացահայտվել են երիտասարդ և հասուն նեյտրոֆիլների քանակի իջեցում, ինչը պրոլիֆերատիվ և ոսկրածուծի լեյկոբլաստային ծիլի հասունացման գործընթացների ճնշման հետևանք է:

Բնականոն պայմաններում պրոլիների կենսասինթեզի ֆերմենտների ակտիվությունն ամենաբարձրն է ճագարների լյարդում և մակերիկամներում: Իմունոբիլիզացիոն սթրեսի պայմաններում այդ ֆերմենտների ակտիվությունն ենթարկվում է փոփոխությունների, դա նկատելի է նաև ուղեղում:

L. Ա. Համբարձումյան. ԴՆԹ-ի GC-պարունակության ազդեցությունը մեթիլեն կապույտի հետ փոխազդեցության վրա էջ. 45–49

Իրականացվել է տարբեր GC-պարունակությամբ հաջորդականություններով ԴՆԹ-ի հետ մեթիլեն կապույտի (ՄԿ) կոմպլեքսների հալումը լուծույթի 0.02 Մ իոնական ուժի պայմաններում: Ցույց է տրվել, որ ԴՆԹ-ի հետ ՄԿ-ի կոմպլեքսների հալման միջակայքի լայնության փոփոխությունն աճում է կապված ԴՆԹ-ում GC-պարունակության ավելացման հետ: Բացահայտվել է, որ ԴՆԹ-ի հետ ՄԿ-ն կապվում է կիսաինտերկալյացիայի եղանակով:

S. Ա. Հարությունյան. Աֆլատոքսին B1, օխրատոքսին A և զեարալենոնի կոմբինացիայի ապոպտոզ-ինդուկցող էֆֆեկտն առնետների հեպատոցիտներում էջ. 50–52

Աֆլատոքսին B1 (ԱՖB1), օխրատոքսին A (OSU) և զեարալենոնը (ՁԵԱ) լայն տարածում ունեցող քաղցկեղածին միկոտոքսիններ են, որոնք ախտահարում են սնունդն ու կերը: Կատարված աշխատանքում ցույց է տրվել ԱՖB1, OSA և ՁԵԱ կոմբինացիայով ապոպտոզի մակածումը բնական ախտահարման դեպքում հանդիպող կոնցենտրացիաներում, առնետների հեպատոցիտներում 15, 30 և 60 օր մշակելուց հետո *in vivo*:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա. Ա. Աղաջանյան. Որոշ դեղաբույսերի ազդեցությունը գլյուկոզի կոնցենտրացիայի վրա մարդու արյան շիճուկում էջ. 53–56

Աշխատանքում հետազոտվել է ջրային և սպիրտային բուսական էքստրակտների ազդեցությունը գլյուկոզի կոնցենտրացիայի վրա մարդու արյան շիճուկում: Ուսումնասիրվել են բույսեր՝ աճեցված ինչպես հողային, այնպես էլ հիդրոպոնիկայի եղանակով: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ սպիրտային էքստրակտները համեմատած ջրային էքստրակտների հետ, զգալիորեն իջեցնում են գլյուկոզի կոնցենտրացիան արյան շիճուկում: Հողային և հիդրոպոնիկայի եղանակով աճեցված բույսերի սպիրտային էքստրակտները նույն ձևով են ազդում գլյուկոզի կոնցենտրացիայի վրա: Հետազոտությունները կատարվել են մարդու արյան շիճուկում *in vitro*: